Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-329[2]-19.09.2013,21.02.2014-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի վերնագրից և առաջին մասից հանել «եռամսյա ուսումնական փորձաշրջան և» բառերը:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետով.

«6.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնելու քրեագիտական հաշվառումներ.»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետը «առողջությանը» բառից հետո լրացնել «վնաս» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ կողմից 2014թ. դեկտեմբերի 1-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	***Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը***	***Առաջարկությունը***	***Եզրակացություն***
ՀՀ կառավարություն	Հոդված 3	Առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ գործող օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում առկա վրիպակը շտկելու նպատակով, մասնավորապես՝ «առողջությանը պատճառած» բառերը փոխարինելով «առողջությանը վնաս պատճառած» բառերով:	Նախագիծը լրացվել է նոր 3-րդ հոդվածով, որի համաձայն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում լրացվել է «վնաս» բառը: